

Արտատպված է՝ XX դարի արտասահմանյան արձակ, հատոր 1 (անգլո-ամերիկյան պատմված), Երևանի համալսարանի հրատարակչություն, 1984: Ծանոթագրությունները՝ Ս. Շ. Փանոսյանի:

## ՇԵՐՎՈՒԴ ԱՆԴԵՐՍՈՆ

### ՈՒՍՈՒՑՉՈՒՀԻՆ

#### Թարգմ. Հակոբ Ծովլիկյան

Ուայնսբուրգի<sup>1</sup> փողոցներում առատ ձյուն էր նստել: Այն սկսել էր տեղալ առավոտյան ժամը տասից: Հանկարծ ուժեղ քամի փշեց և ամբողջ Մեյն Աթրիթով մեկ ձյունը օդ բարձրացավ: Դեպի քաղաք տանող ցեխուտ, սառած փողոցները բավականին հարթ էին, և որոշ տեղերում ձյունը ծածկել էր ցեխը:

— Լավ սահել կլինի, — մտածեց Ուիլ Հենդերսոնը՝ կանգնելով Էդ Գրիֆիթի գինետան բարի մոտ:

Դուրս գալով գինետնից նա հանդիպեց դեղագործ Սիլվեստր Ուեստին, որն օրորվելով գնում էր «քսեռային» կոչվող ծանր կրկնակոշիկներ հազած:

— Զյունը մարդկանց քաղաք է բերելու շաբաթ օրը, — ասաց դեղագործը:

Երիտասարդները մի որոշ ժամանակ խոսեցին իրենց անելիքների մասին: Ուիլ Հենդերսոնը որը բարակ վերաբերու էր հազել և կրկնակոշիկներ չէր կրում, աշուտ կոշիկի քթով հարվածեց ձախ ոստի կրունկին:

— Յորենի համար ձյունը լավ է, — նկատեց դեղագործը:

Երիտասարդ Ջորջ Ուիլարդը, որն այդ օրն աշխատելու տրամադրություն ընդիանրապես չուներ՝ ուրախ էր, որ գործ չկար: Շաբաթաթերթն արդեն տպագրվել և փոստ էր ուղարկվել չորեքշաբթի երեկոյան, իսկ ձյունն սկսել էր տեղալ հինգշաբթի օրը: Ժամը ութին, առավոտյան գնացքի մեկնելուց հետո, նա մի զույգ շմուշկ դրեց գրպանը և գնաց Ուատերուրքս լճի մոտ, բայց չսահեց: Շրջանցելով լիճը, նա շարունակեց քայլել Ուայն Քրիք փողոցով, մինչև հասալ ծառերով շրջապատված ծովափնյա մի պուրակ: Այնտեղ՝ գերանի կողքին նա կրակ վառեց և նստելով գերանի մյուս ծայրին, ընկավ մտածմունքի մեջ: Երբ քամին փշեց և սկսեց ձյունել, նա դեսուրեն վազեց կրակի համար վառելիք ճարելու: Երիտասարդ լրագրողը մտածում էր Քեյթ Սվիֆթի՝ իր նախկին ուսուցչուհու մասին: Նախորդ գիշեր գնացել էր նրա տուն՝ վերցնելու համար այն զիրքը, որ Քեյթը խորհուրդ էր տվել կարդալ, և այնտեղ մի ժամ առանձին էր մնացել նրա հետ: Չորրորդ, թե հինգերորդ անգամն էր, որ այդ կինն իր հետ գրուցել էր ամենայն լրջությամբ, և Ջորջը չէր կարողացել ըմբռնել, թե նա իրենից ինչ է ուզում: Նա սկսեց հավատալ, որ Քեյթը գրոցե սիրահարվել է իրեն, և այդ գաղափարը միաժամանակ թե՛ հաճելի էր և թե՛ անհանգստացնող:

Վեր ցատկելով գերանի վրայից, նա սկսեց մանր փայտեր դիզել կրակի վրա: Հետո շուրջը նայեց և վստահ լինելով, որ մենակ է, սկսեց բարձրածայն խոսել, ասես իր դիմաց կին կար նստած.

— Օ՛հ, դուք պարզապես դուրս եք տալիս, — ասաց նա: — Դուք այդ շատ լավ գիտեք: Բայց ես ձեր դիտավորությունը կպարզե՞մ: Սպասեք և կտեսնեք:

<sup>1</sup> Ուայնսբուրգ – մտացածին գավառական քաղաք (ինչպես Ու. Ֆոլկների Յոկնապատֆան, Գ. Գ. Մարկեսի Մակոնդոն կամ Հ. Մաթևոսյանի Ծմակուտը), ուր տեղի են ունենում Շ. Անդերսոնի պատմվածքներից շատերի գործողությունները:

Նա վեր կացավ և կրակը անտառում թողնելով, քաղաք տանող ճանապարհով ետ գնաց: Մինչ անցնում էր փողոցներով, շմուշկները նրա գրպանում զրնգում էին: Նյու Ուիլարդ Հառու հյուրանոցի իր առանձնասենյակում Զորջը բորբոքեց կրակարանը, պառկեց անկողնում և տարվեց կրքոտ խոհերով: Հետո ծածկեց պատուհանի փեղկը, փակեց աշքերը և երեսը թեքեց դեպի պատը: Նա մի բարձ առավ թների մեջ ու սկսեց համբուրել այն, նախ մտածելով ուսուցուհու մասին, որի խոսքերն ինչ-որ բան էին շարժել իր մեջ, հետո պատկերացրեց քաղաքի բանկիրի նրբակազմ աղջկան՝ Հելեն Ուայթին, որին երկար ժամանակ կիսով չափ սիրահարված էր:

Այդ օրը, երեկոյան ժամը իննին արդեն առատ ձյուն էր նստել և եղանակը սաստիկ ցրտել էր: Փողոցներում քայլելը դժվարացել էր: Խանութները մութ էին, և մարդիկ տներն էին քաշվել: Քիվլենդից<sup>2</sup> եկող երեկոյան զնացքը շատ էր ուշացել, բայց ոչ ոք չէր հետաքրքրվում նրա ժամանումով: Ժամը տասին քաղաքի հազար ութ հարյուր բնակիչներից միայն չորսն էին արթուն:

Գիշերապահ Հոպ Հիգինսը կիսով չափ արթուն էր: Նա կադ էր և ծանր ձեռնափայտով էր քայլում: Մութ գիշերներին իր հետ վերցնում էր նաև մի լապտեր և հերթապահում ժամը իննից մինչև տասը:

Նա քայլում էր ձյունակույտերի միջով Մեյն Սթրիթի մի ծայրից մյուսը՝ ստուգելով խանութների դրները: Ապա նրբանցքներով անցնում էր խանութների ետևի կողմը և ստուգում նաև ետնամուտքերը: Ամեն ինչ կարգին գտնելով, նա այժմ շրջվեց անկյունից, շտապեց դեպի Նյու Ուիլարդ Հառու հյուրանոցը և թակեց դուռը. մտադիր էր գիշերվա մնացած մասն անցկացնել կրակարանի մոտ:

— Դու քնիր, ես կիետևեմ վառարանին,— ասաց Հիգինսը հյուրանոցի գրասենյակում փոքր, մանկական մահճակալի վրա պառկած տղային:

Հետո նստեց կրակարանի մոտ և հանեց կոշիկները: Եթե տղան արդեն քնել էր, սկսեց մտածել իրեն հուզող հարցերի մասին: Նա մտադիր էր գարնանը ներկել իր տունը և այնտեղ կրակարանի մոտ նստած, հաշվում էր ներկի և աշխատանքի արժեքը: Դրանից ծագեցին ուրիշ հաշիվներ: Նա վաթսուն տարեկան էր և մտադիր էր թոշակի անցնել: Քաղաքացիական պատերազմի<sup>3</sup> ժամանակ զինվոր էր եղել և այժմ, որպես թոշակ, մի փոքր գումար էր ստանում: Հիգինսը հույս ուներ ապրուստը վաստակելու ինչ-որ նոր միջոց գտնել և ցանկանում էր դառնալ ժանտաքիսներ բուծող: Իր տան նկուղում նա արդեն չորս հատ ուներ այդ տարօրինակ, վայրի փոքրիկ արարածներից, որոնց օգտագործում էին մարզիկները նապաստակներ հետապնդելիս:

— Հիմա մի արու և երեք հատ էլ էզ ունեմ,— մտածեց նա:— Եթե բախտս բերի, մինչև գարուն տասներկուսից տասնինգ հատ կունենամ: Իսկ մի տարի անց կկարողանամ մարզական թերթերում ժանտաքիսներ վաճառելու մասին հայտարարություն տալ:

Գիշերապահը տեղավորվեց աթոռին և դադարեց մտածել: Բայց չքնեց: Տարիների փորձը նրան սովորեցրել էր երկար գիշերների ընթացքում նստել ժամերով՝ կես քուն, կես արթուն: Առավոտյան նա համարյա այնքան թարմ էր զգում իրեն, կարծես քնած լիներ ամբողջ գիշերը:

Եթե Հոպ Հիգինսը ապահով տեղավորվեց կրակարանի ետևում գտնվող աթոռին, Ուայնսբուրգում միայն երեք հոգի արթուն մնացին: Զորջ Ուիլարդը «Հզըլ» թերթի գրասենյակում էր և իբր զբաղված էր պատմվածք զրելով: Բայց իրականում նրա տրամադրությունը նույնն էր, ինչ առավոտյան, անտառում՝ խարույկի մոտ նստած ժամանակ:

<sup>2</sup> Քիվլենդ – քաղաք Միացյալ Նահանգների հյուսիս-արևելքում:

<sup>3</sup> Քաղաքացիական պատերազմ – բուրժուական Հյուսիսի և ստրկատիրական Հարավի միջև պատերազմը (1861-1865), որն ապարտվեց առաջինի հաղթանակով և ստրկական աշխատանքի վերացմամբ:

Բողոքականների եկեղեցու զանգակատան մթության մեջ պատվելի Քերթիս Հարթմանը պատրաստ նստել էր՝ դիմավորելու աստծու հայտնությունը: Իսկ Քեյթ Սվիֆթը՝ ուսուցչուհին, պատրաստվում էր դուրս գալ տնից՝ փոթորկու եղանակին զբոսնելու համար:

Ժամը տասն անց էր, երբ Քեյթ Սվիֆթը սկսեց իր զբոսանքը: Այն կանխամտածված չէր: «Մորաքույր» Էլիզաբեթ Սվիֆթը շրջկենտրոն էր գնացել և միայն հաջորդ օրն էր վերադառնալու: Տան հյուրասենյակում, մեծ կրակարանի կողքին, որը հատակի վառարան էր կոչվում, նրա դուստրը՝ Քեյթը, նստած զիրք էր կարդում: Հանկարծ նա վեր թռավ, դռան մոտի կախիչից խլեց վերարկուն և տնից դուրս վագեց:

Երեսուն տարեկան Քեյթ Սվիֆթին սիրուն կին չէին համարում Ուայնսբուրգում: Նրա դեմքի մաշկը լավը չէր և ծածկված էր բշտիկներով, մի բան, որ վկայում էր վատառողջության մասին: Սակայն զիշերը, ձմեռային փողոցներում մենակ քայլելիս, նա սիրուն էր: Թիկունքը ուղիղ էր, ուսերը՝ կլոր, իսկ դիմագծերը ձմեռային զիշերվա աղոտ լույսի տակ նման էին այն աստվածուհու նուրբ դիմագծերին, որը կանգնած էր պարտեզում՝ պատվանդանի վրա:

Իր առողջության մասին խորհրդակցելու նպատակով, կեսօրից հետո ուսուցչուհին գնացել էր բժիշկ Ուելինգի մոտ: Վերջինս նրան հանդիմ անել էր և հայտնել, որ նա լսողությունը կորցնելու վտանգի առաջ է կանգնած: Քեյթ Սվիֆթի կողմից հիմարություն էր այդպիսի փոթորկու եղանակին դրսում զբոսնելը. հիմարություն և գուցե նաև՝ անզգություն: Փողոցում զբոսնող կինը չիշեց բժշկի այս խոսքերը և եթե հիշեր էլ, ետ չէր դարնա: Նա շատ էր մրսում, բայց հինգ րոպե քայլելուց հետո ցրտին այլս ուշա դրություն չղարձրեց: Սկզբում գնաց մինչև իր տան փողոցի ծայրը և հետո, անցնելով հարդանոցի մոտ տեղավորված զույգ հարդակչեռքների մոտով, քայլեց դեպի Տրանյըն Փայթ: Ապա այդ փողոցով նա գնաց Նեղ Ուինտրի հարդանոցի ուղղությամբ և շրջվելով դեպի արևելք, շարունակեց քայլել փայտյա ցածր տներով եզերված մի փողոցով, որը Գոսպել Հիլի վրայով տանում էր դեպի Սաքըր Ռոռուդ: Վերջինս էլ անցնում էր ծանծաղուտ հովտով և Այր Սմիթի հավանոցի կողովով ձգվում էր դեպի Ուատերուորքսի լճակը: Այն խիզախ ու հովզված հոգեվիճակը, որը նրան դուրս էր բերել տնից, քայլելու ընթացքում անցավ, ապա նորից համակեց եռթյունը:

Քեթ Սվիֆթի խառնվածքի մեջ ինչ-որ կծող ու վանող բան կար: Ամեն մարդ զգում էր այդ: Դասարանում նա լուր էր, սառը և խիստ, սակայն զարմանալիորեն անշափ մտերիմ՝ իր աշակերտների հետ: Երբեմն պատահում էր, որ նրան համակում էր ինչ-որ մի զգացում և նա ուրախ էր լինում: Դասարանում երեխաներն զգում էին իրենց ուսուցչուհու ուրախ տրամադրությունը: Մի որոշ ժամանակ նրանք դաս չին պարապում և նստարաններին կործնած, լուր նայում էին նրան:

Ձեռքերը մեջքին՝ ուսուցչուհին քայլում էր դասարանի մի ծայրից մյուսը և խոսում շատ արագ: Կարևոր չէր, թե ինչ թեմա էր ծագում նրա մտքում: Մի անգամ նա երեխաներին պատմեց Չարլզ Լեմի<sup>4</sup> մասին և տարօրինակ, գողտրիկ, փոքր պատմվածքներ հորինեց մահացած գրողի կյանքի մասին: Այդ պատմվածքները նա այնպես պատմեց, ասես Չարլզ Լեմի հետ մի տան մեջ ապրած լիներ և տեղյակ էր նրա անձնական կյանքի բոլոր գաղտնիքներին: Երեխաները մի քիչ շփոթվեցին, կարծելով թե Չարլզ Լեմը մի անձնավորություն է, որ մի ժամանակ ապրել է Ուայնսբուրգում:

Մի ուրիշ անգամ ուսուցչուհին երեխաներին պատմեց Բենվենուտո Չելլինի<sup>5</sup> մասին: Այս անգամ նրանք ծիծաղեցին: Ինչպիսի պարձենկոտ, կատաղի, քաջ ու համակրելի անձնավորություն դարձրեց նա այդ ծեր արվեստագետին: Ուսուցչուհին նույնիսկ զվարձախոսություններ հորինեց նրա մասին: Դրանցից մեկի հերոսը գերմանացի մի

<sup>4</sup> Չարլզ Լեմ – անգլիացի գրող (1775-1834), հայտնի են շեքսպիրյան պիեսների նրա վերապատմումները երեխաների համար և ռոմանտիկական էսսեները:

<sup>5</sup> Բենվենուտո Չելլինի – ուշ վերածննդի իտալացի քանակագործ, ոսկերիչ, գրող (1500-1571), մաներիզմի ներկայացուցիչ:

դասատու էր, որն ապրում էր Միլանում՝ Չելինիի բնակարանի վերսի սենյակում։ Այս պատմությունը ևս երեխաներին շատ ծիծառեցրեց։ Շուգը Սքնաքսը՝ կարմիր այտերով՝ այդ գեր տղան այնքան ուժեղ ծիծառեց, որ զիսապտույտ ունեցավ և ցած ընկավ նստարանից՝ ծիծառեցնելով նաև Քեյթ Սվիֆթին։ Հետո հանկարծ ուսուցչուին նորից սառը և խիստ դարձավ։ Չմոռան այդ զիշեր ուսուցչուին քայլում էր ձյունածածկ, ամայի փողոցներով։ Ինչ-որ բան տանջում էր նրան։ Թեև Ուայնսբուրգում ոչ ոք չէր կասկածում, բայց նրա կյանքը հարուստ էր եղել բազմաթիվ արկածներով։ Դրանք այժմ ել շարունակվում են։

Դպրոցում աշխատելու ժամանակ կամ փողոցներով անցնելիս՝ տրտմությունը, հույսը և ցանկությունը պայքարում էին նրա մեջ։ Սառը արտաքինի ետևում թաքնված էին ամենաարտասովոր դեպքեր, որոնք խճում էին նրա միտքը։ Այս քաղաքի մարդիկ Քեյթին համարում էին տանը մնացած աղջիկ, և որովհետև նա խիստ տոնով էր խոսում և մենակ էր ապրում, կարծում էին, թե զորկ է բոլոր տեսակի մարդկային զգացումներից, որոնք այնքան մեծ նշանակություն ունեն կյանքում։ Իրականում նա շատ կրքոտ էր։ Եվ վերջին հինգ տարիների ընթացքում, ինչ վերադարձել էր իր ճանապարհորդություններից Ուայնսբուրգում հաստատվելու և ուսուցչուի դառնալու նպատակով, շատ անգամներ ստիպված էր եղել դուրս զալ տնից և քայլել զիշերվա կեսին՝ իր զգացմունքների դեմ ինչ-որ ներքին պայքար մղելով։ Մի անգամ, անձրևոտ մի զիշեր, նա վեց ժամ դրսում էր մնացել և երբ վերադարձել էր տուն, վիճել էր «մորաքույր» Էլիզաբեթ Սվիֆթի հետ։

— Ինչ լավ է, որ դու տղամարդ չես,— կտրուկ ասել էր մայրը։ — Շատ անգամներ եմ սպասել հորդ տուն զալուն՝ շիմանալով թե ինչ նոր փորձանքի է հանդիպել։ Ես ապրել եմ անորոշության իմ բաժինը և դու չես կարող այժմ ինձ մեղադրել այն բանի համար, որ չեմ ցանկանում քո մեջ տեսնել նրա վատթարագույն գծի վերաբտադրությունը։

\*\*\*

Զորջ Ուիլարդի նկատմամբ տածած համակրանքից այրվում էր Քեյթ Սվիֆթի միտքը։ Նրա դպրոցական շարադրություններից մեկը կարդալով, Քեյթը այնտեղ տաղանդի ինչ-որ նշույլ գտավ և ցանկացավ իրախուսել նրան։

Ամոռան մի օր «Բգը» թերթի գրասենյակը գնալով և երիտասարդին ազատ գտնելով, Քեյթը նրան Մեյն Սթրիթի երկայնքով տարավ դեպի տոնավաճառ, որտեղ երկուսով նստեցին կանաչ խոտերի վրա և զուցեցին։ Ուսուցչուին փորձեց հասկացնել, զաղափար տալ նրան այն մասին, թե որպես գրող ինչպիսի դժվարությունների կարող է հանդիպել։

— Դու պետք է հասկանաս կյանքը, — ասաց Քեյթը։ Նրա ձայնը դողուում էր լրջությունից։ Նա բռնեց Զորջ Ուիլարդի ուսերից և այնպես շրջեց դեպի իր կողմը, որ կարողանար նայել նրա աչքերի մեջ։ Անցորդներին կարող էր թվալ, թե նրանք զրկախառնվելու են։

— Եթե դու գրող ես դառնալու, պետք է դադարես բառերի հետ խաղալուց, — բացատրեց նա։ — Գերադասելի է, որ հրաժարվես գրելու զաղափարից, մինչև որ ավելի լավ պատրաստվես։ Հիմա ապրելու ժամանակն է։ Քեզ վախեցնելու միտք չունեմ, պարզապես ուզում եմ հասկացնել, որ այն, ինչ մտադիր ես փորձել, չափազանց կարևոր է։ Դու չպետք է բառերի սուլ կիբեռեզակ լինես։ Կարևորն այն է, որ իմանաս, թե մարդիկ ինչի՝ մասին են մտածում և ոչ թե ինչ են ասում։

Այդ փոթորկալից հինգշաբթի օրվա նախորդ զիշերը, երբ պատվելի Քերթիս Հարթմանը նստել էր եկեղեցու զանգակատանը՝ ուսուցչուի մարմնին հայացք զցելու հույսով, երիտասարդ Ուիլարդը այցելության էր գնացել Քեյթին, որպեսզի նրանից մի զիրք վերցնի։ Այդ ժամանակ էր ահա, որ այդ դեպքը պատահեց և շփոթեցրեց երիտասարդին։ Նա զիրքը թևի տակ դնելով պատրաստվում էր դուրս զալ, երբ Քեյթ Սվիֆթը նորից խոսեց ամենայն լրջությամբ։ Գիշերը վրա էր հասնում և սենյակի լույսը գնալով աղոտանում էր։ Երբ երիտասարդը շրջվեց, որ գնա,

ուսուցուիին մեղմորեն արտասանեց նրա անունը և ինքնաբուխ մի շարժումով բռնեց նրա ձեռքը: Թղթակիցը համարյա տղամարդ էր դարձել, և նրա տղամարդկային գրավչությունը, ինչպես նաև զվարքությունը միայնակ կնոջ սիրտը շարժեցին: Ուսուցուիու մեջ կրքու ցանկություն առաջացավ՝ Ուիլարդին անկեղծորեն բացատրելու և հասկացնելու կյանքի կարևորությունը: Նա դեպի առաջ թեքվեց, և շրջունքները քսվեցին երիտասարդի այտերին: Այդ րոպեին տղան, կյանքում առաջին անգամ զիտակցեց աղջկա կառուցվածքի ընդգծված գեղեցկությունը: Երկուսն էլ մի պահ շփոթվեցին, և իր զգացմունքները հանդարտեցնելու համար ուսուցուիին նորից դարձավ կոպիտ ու բռնակալ:

— Ի՞նչ օգուտ,— գորաց նա կրքոտությամբ:— Տասը տարի հետո միայն դու կսկսես հասկանալ, թե ինչ եմ ուզում ասել, երբ զրուցում եմ քեզ հետ:

\*\*\*

Փոթորկու այդ գիշեր, մինչ կղերականը եկեղեցում նստած սպասում էր նրան, Քեյթ Սվիֆթը զնաց «Ուայնզրուրգ Իգլ» թերթի խմբագրություն, երիտասարդի հետ մի անգամ էլ զրուցելու: Ջան մեջ երկար քայլելուց նա սկսեց մրսել, միայնակ և հոգնած զզաց իրեն: Բարձրանալով Մեյն Սթրիթ փողոցով, Քեյթը նշմարեց տպարանի լուսամուտից եկող լույսը, որի փայլն ընկել էր ձյան վրա: Նա բացեց դուռը և ներս մտավ: Գրասենյակում, կրակարանի մոտ մի ժամ նստած, նա խոսեց ընդհանրապես կյանքի մասին, խոսեց կրքոտ, լրջությամբ: Ինչ-որ մղիչ մի ուժ նրան տնից դուրս, դեպի ձյունն էր քշել: Այժմ այդ նույն մղիչ ուժն էր, որ իրեն խոսեցնում էր: Խոսելու ընթացքում նա ոգևորվեց այնպես, ինչպես երբեմն պատահում էր դպրոցում, աշակերտների ներկայությամբ: Նրա մեջ բուռն ձգուում առաջացավ կյանքի դուռը նորից բացելու երիտասարդի առջև, որը մի ժամանակ իր աշակերտն էր եղել և, իր կարծիքով, կյանքը հասկանալու թարուն տպանդ ուներ: Այնքան ուժեղ էր նրա կիրքը, որ այն ֆիզիկական մղում դարձավ: Քեյթի ձեռքերը նորից դիպան երիտասարդի ուսերին, և նա Ուիլարդին դարձրեց իր կողմը: Աղոտ լույսի տակ ուսուցուիու աչքերը բոցկտացին: Նա վեր կացավ և ծիծառեց, բայց ոչ թե սովորականի պես սուր, այլ տարօրինակ, անհամարձակ կերպով:

— Ես պետք է գնամ,— ասաց նա:— Մի րոպե էլ որ մնամ, անկարող կլինեմ չհամբուրել քեզ: Խմբագրատանը շփոթություն առաջացավ: Թեյթ Սվիֆթը շրջվեց և քայլեց դեպի դուռը: Ճիշտ է, նա ուսուցուիի էր, բայց և կին էր միաժամանակ: Զորջ Ուիլարդին նայելիս, տղամարդու կողմից սիրվելու կրքու ցանկությունը, որ երևի հազար անգամ դրանից առաջ փոթորկի նման անցել էր իր մարմնով, համակեց նրա ողջ կությունը: Ճրագի լույսի տակ Զորջ Ուիլարդը ոչ թե տղայի, այլ այր մարդու տեսքն ուներ, որը պատրաստ էր տղամարդու դեր կատարել:

Ուսուցուիին թողեց, որ Զորջ Ուիլարդը թևերի մեջ առնի իրեն: Տաքուկ, փոքրիկ գրասենյակում օդը հանկարծ ծանրացավ, և նա թռվություն զզաց: Հենվելով դռան մոտ գտնվող ծանր սեղանին, նա սպասեց: Երբ երիտասարդը մտտեցավ և ձեռքը դրեց նրա ուսին, Քեյթը շրջվեց և թռնեց, որ իր ծանր մարմինը հանգչի երիտասարդի վրա: Զորջ Ուիլարդն էլ ավելի շփոթվեց: Մի րոպե նա ուժեղ գրկեց երիտասարդ կնոջը և սեղմեց իր կրծին: Հետո ուսուցուիին պրկվեց, և երկու սուր, փոքրիկ բռունցքներ հարվածներ տեղացին Զորջի դեմքին: Երբ ուսուցուիին հեռացավ և երիտասարդին թողեց մենակ, վերջինս մոլեգնաբար հայինյելով, սկսեց քայլել գրասենյակի մի ծայրից և յուսը: Այս շփոթ կացության մեջ հայտնվեց պատվելի Քերթիս Հարյումանը: Երբ նա ներս մտավ, Զորջ Ուիլարդը ենթադրեց, որ մարդիկ խելազարվել են: Իր արյունոտ բռունցքը օդի մեջ թափահարելով, կրոնավորը հայտնեց, թե այդ կինը, որին մի րոպե առաջ Զորջն իր թևերի մեջ էր առել, աստծո միջնորդն էր և ճշմարտության միսիա էր կատարում:

\*\*\*

Զորջը հանգցրեց լուսամուտի մոտ գտնվող ճրագը, կողպեց տպարանի դուռը և գնաց տուն։ Հասնելով հյուրանոց, որտեղ Հոպ Հիգինսը ժանտաքիսներ բուծելու երազանքով էր տարված, նա բարձրացավ իր առանձնասենյակը։ Վառարանի մեջ կրակը հանգել էր, և Զորջը հանվեց ցուրտ սենյակում։ Երբ անկողին մտավ, սավանները նրան ձյունե սառած ծածկոցներ թվացին։

Զորջ Ուիլարդը շրջվեց անկողնում, որտեղ պառկած էր այդ երեկո, թևերի մեջ բարձր սեղմած և մտածում էր Քեյթ Սվիֆթի մասին։ Նրա ականջներում հնչեցին կրոնավորի խոսքերը, որին հանկարծակի խելազարվածի տեղ էր դրել։ Զորջի աշքերը պտտվեցին սենյակով մեկ։ Խարված տղամարդուն հատուկ բարկությունն անցավ և նա փորձեց հասկանալ, թե ինչ էր պատահել, բայց չկարողացավ։ Մտովի կրկին ու կրկին քննեց այդ հարցը։ Ժամերն անցան և նա սկսեց մտածել, որ շուտով նոր օր է բացվելու։ Ժամը չորսն էր, երբ վերմակն իր վրա քաշեց մինչև վիզը և փորձեց քնել։ Երբ թմրություն զգաց և աշքերը փակեց, ձեռքը վեր բարձրացրեց և խարխափեց մթության մեջ։

— Ես մի բան չեմ հասկացել։ Քեյթ Սվիֆթը ինչ-որ բան էր ուզում ասել ինձ, և ես այդ չեմ հասկացել, — շշնչաց Զորջը քունը գլխին։

Եվ ամբողջ Ուայնաբուրգում նա ամենավերջինը քնեց ձմռան այդ գիշեր։